

ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԳԻՏՍՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՈՒ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԴՐԱՄՍԱՇՆՈՐՀԻ ԶԵՎՈՎ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ

ք. Երևան

«_30_»_01_ 2019 թ.

Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիան, ի դեմս նախագահ Ռ. Մարտիրոսյանի (այսուհետ՝ ՀՀ ԳԱԱ), որը գործում է ՀՀ ԳԱԱ կանոնադրության հիման վրա, մի կողմից, և նաև ՀՀ ԳԱԱ Էկոլոգանոսֆերային հետազոտությունների կենտրոնը, ի դեմս տնօրեն Արմեն Սաղաթեյանի (այսուհետ՝ Կազմակերպություն) որը գործում է Կազմակերպության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից (այսուհետ՝ միասին՝ Կողմեր), հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի նոյեմբերի 17-ի N 1121 որոշումը (այսուհետ՝ Որոշում), «Շրջակա միջավայրի երկրաբնապահպանական հետազոտություններ» ծրագրի (այսուհետ՝ Ծրագիր) իրականացման նպատակով կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր)՝ հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան

1.1. Պայմանագրով ՀՀ ԳԱԱ-ն պարտավորվում է ծրագրի իրականացման նպատակով Կազմակերպությանը հատկացնել Հայաստանի Հանրապետության 2019 թվականի պետական բյուջեով նախատեսված **113 731 700, հարյուր տասներեք միլիոն յոթ հարյուր երեսունմեկ հազար յոթ հարյուր** ՀՀ դրամ գումար, ներառյալ՝ ավելացված արժեքի հարկը (այսուհետ՝ ԱԱՀ), իսկ Կազմակերպությունը պարտավորվում է Ծրագիրն իրականացնել Որոշմամբ և Պայմանագրով սահմանված կարգով:

1.2 Պայմանագրի գնի մասին համաձայնությունը, Ծրագրի առաջադրանքը, օրացուցային պլանը, նախահաշիվը և կատարողների մասին տեղեկությունները ներկայացված են Պայմանագրի հավելվածներում:

2. Կողմերի իրավունքները և պարտավորությունները

2.1 ՀՀ ԳԱԱ-ն իրավունք ունի՝

2.1.1 Կազմակերպությունից պահանջելու կատարել Պայմանագրի 2.4 կետով նախատեսված պարտավորությունները,

2.1.2 ցանկացած ժամանակ ստուգելու Կազմակերպության կողմից իրականացվող Միջոցառումների ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը,

2.1.3 չընդունելու իրականացված Միջոցառումները՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ, և Կազմակերպությունից պահանջելու վճարել Պայմանագրի 6-րդ մասով նախատեսված տուգանքը,

2.1.4 առանց իրականացված Միջոցառումների արդյունքների դիմաց գումար տրամադրելու՝ միակողմանի լուծելու Պայմանագիրը և պահանջելու հատուցել պատճառված վնասները, եթե՝

2.1.4.1 Կազմակերպությունը ժամանակին չի սկսում Ծրագրի իրականացումը, կամ Ծրագրի իրականացման ժամանակ ակնհայտ է դառնում, որ այն պատշաճ չի իրականացվելու,

2.1.4.2 Կազմակերպությունը երկու և ավելի անգամ խախտել է Ծրագրով նախատեսված Միջոցառումների իրականացման ժամկետները (նախատեսված լինելու դեպքում),

2.1.4.3 իրականացված Միջոցառումները չեն համապատասխանում Ծրագրով սահմանված պահանջներին,

2.1.5 Պայմանագիրն օրենքով կամ Պայմանագրով նախատեսված հիմքերով լուծելու դեպքում պահանջելու իրեն հանձնել անավարտ Միջոցառումների արդյունքները:

2.2 Կազմակերպությունն իրավունք ունի՝

2.2.1 ՀՀ ԳԱԱ-ի կողմից գումարները չվճարվելու դեպքում միակողմանի լուծելու Պայմանագիրը և պահանջելու հատուցել իրեն պատճառված վնասները,

2.2.2 Ծրագրի կատարման համար, օրենսդրությամբ սահմանված կարգով, ներգրավելու երրորդ անձանց,

2.2.3 ՀՀ ԳԱԱ -ի գրավոր համաձայնությամբ այլ կազմակերպություններին հանձնել կատարված աշխատանքների արդյունքները:

2.3 ՀՀ ԳԱԱ-ն պարտավոր է՝

2.3.1 Ծրագրով նախատեսված դեպքերում աջակցել Կազմակերպությանը,

2.3.2 ընդունել համապատասխան որոշում՝ իրականացված Միջոցառումների մասին ներկայացված տարեկան հաշվետվության վերաբերյալ,

2.3.3 ստուգել ու ամփոփել Կազմակերպության կողմից Ծրագրի իրականացման ենթակա գործառնությունների գծով ձեռք բերված քանակական ու որակական ցուցանիշների վերաբերյալ տեղեկությունների հիման վրա հաշվարկված գումարի չափի մասին հաշվարկները և իր եզրակացության հետ միասին դրանք ներկայացնել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն՝ վերջինիս կողմից սահմանված կարգով և ժամկետներում:

2.4 Կազմակերպությունը պարտավոր է՝

2.4.1 Ծրագիրը կատարել անձամբ,

2.4.2 Ծրագիրը կատարել առաջադրանքին համապատասխան և դրա արդյունքը ՀՀ ԳԱԱ հանձնել սահմանված ժամկետում,

2.4.3 Պայմանագրով նախատեսված ֆինանսական միջոցներն օգտագործել Ծրագրով և Պայմանագրով սահմանված նպատակներով ու չափաքանակներով,

2.4.4 կատարել ՀՀ ԳԱԱ -ի կողմից բացահայտված թերությունների վերացման նպատակով տրված ցուցումները,

2.4.5 աշխատանքի ակնկալվող արդյունքի ստացման անհնարիության հայտնաբերման կամ աշխատանքը շարունակելու աննպատակահարմարության մասին եռօրյա ժամկետում տեղեկացնել ՀՀ ԳԱԱ,

2.4.6 ՀՀ ԳԱԱ ներկայացնել հաշվետու ժամանակաշրջանում Պայմանագրի շրջանակներում վճարման գումարի չափի վերաբերյալ հայտ (այսուհետ՝ Հայտ)՝ մինչև հաշվետու ամսվան հաջորդող ամսի 10-ը: Հայտում նշվում է Պայմանագրի շրջանակներում Կազմակերպության կողմից ծրագրի իրականացման ենթակա գործառույթների գծով ձեռք բերված քանակական ու որակական ցուցանիշների վերաբերյալ տեղեկություններ և դրանց հիման վրա հաշվարկված գումարի չափի մասին մանրամասն հաշվարկներ,

2.4.7 Պայմանագրի նախահաշվում ֆինանսական ցուցանիշներից շեղումների դեպքում ՀՀ ԳԱԱ ներկայացնել հիմնավորում,

2.4.8 իրականացնել Ծրագրի շրջանակներում ՀՀ ԳԱԱ -ի կողմից տրամադրված գումարների՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված հաշվապահական հաշվառում,

2.4.9 Ծրագրի ավարտից հետո ՀՀ ԳԱԱ ներկայացնել միջոցառումների իրականացման մասին տարեկան հաշվետվություն՝ դրան կցելով գիտական ծրագրի հաշվետվության հանձնման-ընդունման արձանագրություն,

2.4.10 Պայմանագրի գործողության ընթացքում ապահովել Ծրագրի իրականացմանը վերաբերող փաստաթղթերին ծանոթանալու ՀՀ ԳԱԱ -ի հնարավորությունը,

2.4.11 Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ ապրանքները, աշխատանքները և ծառայությունները ձեռք բերել «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով՝ պետության կարիքների համար կատարվող գնումների կանոններին համապատասխան,

2.4.12 Պայմանագրով նախատեսված միջոցառումների իրականացման արդյունքում առաջացած տնտեսումները/խնայողությունները վերադարձնել Հայաստանի Հանրապետության պետական բյուջե՝ ոչ ուշ, քան մինչև ընթացիկ տարվա դեկտեմբերի 25-ը:

3 Ծրագրի ֆինանսավորման չափը

Ծրագրի ֆինանսավորման չափը կազմում է **113 731 700. հարյուր տասներեք միլիոն յոթ հարյուր երեսունմեկ հազար յոթ հարյուր** ՀՀ դրամ՝ ներառյալ ԱԱՀ:

4 Մոնիթորինգ

4.1 ՀՀ ԳԱԱ-ն ցանկացած ժամանակ կարող է իրականացնել մոնիթորինգ՝ ուսումնասիրելով Ծրագրին առնչվող փաստաթղթեր և նյութեր:

4.2 Մոնիթորինգն իրականացվում է ՀՀ ԳԱԱ -ի կամ նրա կողմից լիազորված անձի կողմից:

4.3 Մոնիթորինգի իրականացման ընթացքում Կազմակերպությունից կարող են պահանջվել գրավոր ու բանավոր պարզաբանումներ և բացատրություններ:

4.4 Մոնիթորինգի իրականացման ընթացքում բացահայտված թերացումների ու բացթողումների շտկման նպատակով Կազմակերպությանը տրվում են ցուցումներ և արվում են առաջարկություններ:

5 Վճարման կարգը և ժամկետները

5.1 ՀՀ ԳԱԱ-ն Կազմակերպությանը վճարումները կատարում է Հայտն ընդունելու օրվան հաջորդող 20 աշխատանքային օրվա ընթացքում, եթե Ծրագրով սահմանված չեն վճարումների կատարման այլ կարգ և ժամկետներ:

5.2 ՀՀ ԳԱԱ-ն Պայմանագրի գինը վճարում է Պայմանագրում նշված Կազմակերպության հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով, որն ըստ եռամսյակների բաշխվում է հետևյալ կերպ. բյուջետային տարվա 1-ին եռամսյակում՝ 20 տոկոս, 2-րդ եռամսյակում՝ 25 տոկոս, 3-րդ եռամսյակում՝ 25 տոկոս, 4-րդ եռամսյակում՝ 30 տոկոս:

6 Կողմերի պատասխանատվությունը

Պայմանագրով և Ծրագրով նախատեսված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքում Կազմակերպությունը պարտավորվում է փոխհատուցել չիրականացված Միջոցառման չափով և վճարել տուգանք՝ չիրականացված Միջոցառման համար նախատեսված գումարի 1 տոկոսի չափով: Ընդ որում, տուգանքի վճարումը Կազմակերպությանը չի ազատում իր պարտավորությունները կատարելու և խախտումները վերացնելու պարտականությունից: ՀՀ ԳԱԱ-ն սույն կետով նախատեսված գումարները հաշվարկում և հաշվանցում է Կազմակերպությանը վճարվելիք գումարներից:

7 Պայմանագրի գործողության ժամկետը

Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև Կողմերի ստանձնած պարտավորությունների՝ ամբողջ ծավալով կատարումը:

8 Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով նախատեսված պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար Կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է Պայմանագիրը կնքելուց հետո, և որը Կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներն են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարումը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում Պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 ամսվանից ավելի, ապա Կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծելու Պայմանագիրը՝ դրա մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

9 Եզրափակիչ դրույթներ

9.1 Պայմանագրում կատարվող փոփոխությունները կամ լրացումներն իրավաբանական ուժ ունեն, եթե կազմված են գրավոր և ստորագրված են Կողմերի կողմից:

9.2 Պայմանագիրը կնքվում է երկու օրինակով, որոնք ունեն հավասար իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է Պայմանագրի մեկ օրինակ: Պայմանագրի անբաժանելի մասն է Կազմակերպության կողմից ՀՀ ԳԱԱ ներկայացված Ծրագրի հայտը:

9.3 Պայմանագրով նախատեսված պարտավորությունների չկատարման հետ կապված, ինչպես նաև Պայմանագրով չնախատեսված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

10 Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՀՀ Գիտությունների ազգային ակադեմի
ք. Երևան, Մարշալ Բաղրամյան 24
Հ/հ 900011024115
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն

ՀՀ ԳԱԱ Էկոլոգանոսֆերային
հետազոտությունների կենտրոն
ք. Երևան, Արվյան 68
Հ/հ 900018005414
ՀՎՀՀ 01506627

Նախագահ՝


(ստորագրություն)


Գ. Տ.

Տնօրեն


(ստորագրություն)
Ա. Սաղաթեյան
(անուն, ազգանուն)

Գ. Տ.

Ծրագրի գիտական ղեկավար՝


(ստորագրություն) Արմեն Սաղաթեյան
(անուն ազգանուն)

Հավելված 1
« 30 » 01 2019թ.
N Կ-18 պայմանագրի

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՆԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅԱՆ

Մենք՝ ներքոստորագրյալներս, ՀՀ ԳԱԱ նախագահ Ռ. Մարտիրոսյանը և Կազմակերպության տնօրեն Ա. Մաղաթեյանը, վկայում ենք, որ Կողմերը համաձայնություն են ձեռք բերել « 30 » 01 20.. թ. N Կ-18 պայմանագրով աշխատանքի գնի վերաբերյալ՝ 113 731 700. հարյուր տասներեք միլիոն յոթ հարյուր երեսունմեկ հազար յոթ հարյուր ՀՀ դրամ գումարի չափով, ներառյալ՝ ԱԱՀ:

Սույն արձանագրությունը հիմք է Կողմերի միջև փոխադարձ հաշվարկների և վճարումների համար:

ՀՀ ԳԱԱ

Նախագահ՝

(ստորագրություն)



Կազմակերպություն

Տնօրեն՝ Ա. Մաղաթեյան

(ստորագրություն)



ԱՌԱՋԱԴՐԱՆՔ

«Շրջակա միջավայրի երկրաբնապահպանական հետազոտություններ» ծրագրի

1. Աշխատանքի կատարման հիմքը՝ Հայաստանի Հանրապետության 2019 թվականի պետական բյուջե:

2. Աշխատանքի նպատակը (1 պարբերություն):

Ծրագրի նպատակն է ՀՀ տարբեր տարածքների էկոլոգիական իրավիճակի համալիր գնահատումը, էկոլոգիական, առողջական և սննման շղթայի ռիսկի գործոնների բացահայտումը և գնահատումը, էկոլոգիական փորձաքննության գիտամեթոդական հիմունքների մշակումը:

3. Աշխատանքին ներկայացվող հիմնական պահանջները (մինչև 1 էջ):

Հետազոտություններն ընդգրկում են դաշտային աշխատանքներ, նմուշների մշակում, տարրալուծում, ստացված տվյալների վերլուծություն: Ծրագրով նախատեսված հետազոտությունների ընթացքում կկիրառվեն զանազան հմտություններ (no-how), դաշտային էքսպրես անալիզի սարքավորումներ, տարածակողմնորոշող թվային տեխնիկա և քարտեզներ, տիեզերական լուսանկարներ, էքսպերտային դասի գերձզգրիտ տարրալուծման սարքեր, GIS տեխնոլոգիաներ և համակարգչային մոդելավորում:

Հետազոտությունների գիտամեթոդական հենքն է հանդիսանում գեոէկոլոգիական սկզբունքը, երբ բոլոր տվյալները տարածաժամանակային կապ են ստանում: Օգտագործելով տարածքը որպես օբյեկտիվիզացնող գործոն հնարավոր է դառնում համադրել տարբեր, առաջին հայացքից իրար հետ առնչություն չունեցող տվյալները, օրինակ՝ թույլ երկրաշարժերը ու քաղցկեղի զարգացումը, ծանր մետաղներով հողերի աղտոտվածությունը և պերինատալ մահացությունը և այլն: Շնորհիվ նորագույն տեխնոլոգիաների կիրառմանը՝ հնարավոր է դառնում իրականացնել խորը, մանրակրկիտ ուսումնասիրություններ՝ ի հայտ բերելով մինչ օրս անհայտ երևույթներ և ռիսկի գործոններ, ինչի շնորհիվ կարելի է մշակել կանխարգելիչ և վնասը նվազեցնող միջոցառումներ:

Շնորհիվ իրականացված բազմաթիվ դրամաշնորհների և պայմանագրային աշխատանքների՝ էկոլոգիաներին ապահովված է դաշտային աշխատանքների կատարման համար անհրաժեշտ ամենագնաց ավտոմեքենաներով, տեղափոխելի ժամանակակից անալիտիկ սարքերով և դաշտային պարագաներով: Կենտրոնի կազմում գործում է ՀՀ էկոնոմիկայի նախարարության կողմից արտոնագրված Անալիտիկ փորձարարական լաբորատորիան (հավատարմագրում ISO 17025-2005, № 027/T-027), որը համալրված է թանկարժեք էքսպերտային դասի տարրալուծման սարքավորումներով:

Կենտրոնում գործում են «Բնապահպանություն և բնօգտագործում» մագիստրոսական և ՅՈՒՆԵՍԿՕ-ի «Կրթություն հանուն կայուն զարգացման» ամբիոնները, որոնցում պատրաստվում են անհրաժեշտ որակավորման երիտասարդ մասնագետները: Առկա է նաև հայցորդների և ասպիրանտների ուսուցման հնարավորությունը, որն ապահովում է ակտիվ գիտնականների որակավորումը:

4. Աշխատանքի բովանդակությունը (մինչև 3 էջ):

2019թ.-ին ծրագրով հիմնարար բնույթի աշխատանքները բերված են ստորև՝ ըստ առանձին ուղղությունների և ստորաբաժանումների

Շրջակա միջավայրի երկրաբնամիջավայրի բաժին.

• ՀՀ բնակավայրերի հողերում տոքսիկ տարրերի պարունակությունների ուսումնասի-

րում, տարածական բաշխվածության առանձնահատկությունների բացահայտում և քարտեզագրում:

- Հրագրան գետի Երևան քաղաքում ընկած հատվածի ջրի որակի մոնիթորինգ,
- Կապան և Քաջարան քաղաքների տարածքում տոքսիկ տարրերի ֆոնային պարունակությունների ուսումնասիրում:

USZ և հեռագնման բաժին.

- կլիմայի փոփոխության պայմաններում էկոհամակարգերի արդյունավետության գնահատման հեռագնման մեթոդների մշակման աշխատանքները
- գյուղատնտեսական հողահանդակներում էրոզիոն պրոցեսների ձևավորման, զարգացման և վտանգավորության աստիճանի գնահատման հեռագնման մեթոդիկայի ստուգաչափման (վալիդացիայի) և կատարելագործման աշխատանքները՝ կիրառելով գերբարձր տարածական լուծաչափի անօդաչու թռչող սարքերից (ԱԹՍ) և արբանյակային լուսանկարների:

Կենսաքիմիայի բաժին. Նախատեսվում է շարունակել Երևան քաղաքի կանաչ տնկարկներում ընգրկված մշտադալար բույսերի հետազոտությունները: Վեգետացիայի տարբեր ժամանակահատվածներում (ամառ-ձմեռ) գնահատվելու է բուսատեսակների վիճակը, ուսումնասիրվելու է ծանր մետաղներ և գազային աղտոտիչներ կլանելու հատկությունները, նյութափոխանակությունը:

Ռադիոէկոլոգիայի բաժին. նախատեսվում է իրականացնել ՀՀ խոշորագույն քաղաքների շրջակա միջավայրում բնական ու տեխնածին ռադիոնուկլիդներով պայմանավորված բնակչության առողջական ռիսկի գնահատում, որի փուլերն են. առկա տվյալների հենքերի վերլուծություն և ամփոփում, ռադիոլոգիական վտանգի ինդեքսների հաշվարկ, բնակչության քաղխկեղածին ռիսկի ինդեքսի որոշում, քարտեզագրում և քաղաքների ռադիոլոգիական իրավիճակի համեմատական վերլուծություն:

Մանրի շղթայի ռիսկերի գնահատման տեղեկատվավերլուծական կենտրոն. նախատեսվում է 2019թ.-ին շարունակել սննդամթերքի անվտանգության հիմնահարցերին ուղղված գիտամեթոդական բնույթի հետազոտությունները: Նպատակն է սննդամթերքի անվտանգության ոլորտում ռիսկերի գնահատման գիտամեթոդական հենքի ապահովումը: Նախատեսվում է ընդհանուր սննդակարգային հետազոտության ներդաշնակեցված մեթոդների վերաբերյալ մեթոդական ուղեցույցի մշակում:

Կենսակենդանի և կերային ռեսուրսների բաժին. խնդիր է դրվել մոդելային տարածքներում որոշել բույսերի արդյունավետությունը, կալորիականությունը, ընդհանուր օրգանական նյութերի, հում պրոտեինի, ճարպի, թաղանթանյութի ու հողերում N,P,K-ի պարունակության հնարավոր կորրեկցիոն կապը:

UNESCO-ի «Կրթություն հանուն կայուն զարգացման» ամբիոն. 2019 թ.-ին ամբիոնն իր գործունեությամբ կշարունակի աջակցել «Կրթություն հանուն կայուն զարգացման» գործընթացին և իր գործունեությամբ նպաստել գիտության ոլորտի 3 (կրթական, հետազոտական և ինովացիոն) բաղադրիչների ինտեգրմանն ազգային և տարածաշրջանային մակարդակներով: Ամբիոնը կաջակցի նաև Էկոկենտրոնի «Բնապահպանություն և բնօգտագործում» մասնագիտությամբ մագիստրոսական կրթական ծրագրերով մասնագետների պատրաստմանը՝ ապահովելով համապատասխան ուսումնական ծրագրեր և ինտերակտիվ մեթոդներ:

2019թ.-ին ծրագրով նախատեսված կիրառական աշխատանքները բերված են ստորև՝ ըստ առանձին ուղղությունների և ստորաբաժանումների:

Շրջակա միջավայրի երկրաքիմիայի բաժին. Ստացված արդյունքների հիման վրա կազմվում են տարատիպ քարտեզներ, թեմատիկ ատլասներ, նորմատիվային ուղեցույցեր, որոնք հենքային են

միջավայրի որակի բարելավման գիտահեն լուծումների ներդրման, արդյունավետ կառավարման և որոշումների կայացման համար: Ելքային կարևոր նյութ են հանդիսանում խելացի քաղաքների նախագծերի մշակման համար: Պայմանավորված երկրաքիմիական տվյալների տարածածա-մանակային փոփոխականությամբ ստացված նյութերը հանդիսանում են յուրօրինակ և ենթակա չեն համեմատության և մրցակցության: Շահագրգիռ կողմերն են տեղական ինքնակառավարման մարմինները, ոլորտին առնչվող նախարարությունները, ձեռնարկատերերը և միջազգային մի շարք կազմակերպություններ:

USZ և հեռագնման բաժին. Մշակվելու է և կատարելագործվելու է հեռագնման համակարգ, որը հնարավորություն կտա Հայաստանում իրականացնել կլիմայի փոփոխության պայմաններում լեռնային էկոհամակարգերի վիճակի (արդյունավետության, դեգրադացման աստիճանի և այլն) վերահսկում՝ ԱԹՍ և արբանյակային լուսանկարների կիրառմամբ: Հեռագնման մշակվող մոնիթորինգային համակարգը կարող է կիրառվել գյուղատնտեսության ոլորտում լեռնային արոտավայրերի ռացիոնալ օգտագործման, մշակվող ցանքատարածությունների էկոլոգիական վիճակի գնահատման, ակնկալվող բերքի կանխատեսման ինչպես նաև բնապահպանության ոլորտում կենսոլորտային պահպանավայրերի ստեղծման և վիճակի վերահսկման գործում: Ելնելով համաշխարհային փորձից հեռագնման մշակվող մոնիթորինգային համակարգը միտված է դառնալու Հայաստանում տարածքների էկոլոգիական անվտանգության վերահսկման պարտադիր բաղադրիչ:

Ռադիոէկոլոգիայի բաժին. Կիրառական արդյունքը ցածր ակտիվությամբ նմուշների գամմա-սպեկտրաչափական միջլաբորատոր փորձարկման ծրագրի ներդրման խորհրդատվական ծառայություն: Կիրառման ոլորտը՝ լաբորատոր որակի ապահովում/վերահսկում, որը բխում է ISO/IEC 17025 ստանդարտի պահանջներից: Մրցակցային է տարածաշրջանի շուկայում, և, հաշվի առնելով գամմա սպեկտրաչափական լաբորատորիաների փոքրաթիվությունը, պահանջարկը առկա է:

Սննդի շղթայի ռիսկերի գնահատման տեղեկատվավերլուծական կենտրոն իրականացվելու է սննդամթերքի անվտանգության կառավարման համակարգի ներդրման խորհրդատվություն, սննդամթերքի անվտանգությանը սպառնացող քիմիական վտանգների և ռիսկերի գնահատում: Սննդակարգային ուսումնասիրություններ, կիրառական հետազոտություններն ուղղված են ազգաբնակչության անվտանգության գնահատմանը և ռիսկի վրա հիմնված որոշումների կայացման համակարգի ներդրմանը ՀՀ-ում: Ծրագրով նախատեսված ծառայություններն ուղղված են պետական մոնիթորինգների իրականացմանն ու օժանդակմանը:

Կենսաքիմիայի բաժին. Ծրագրով նախատեսված հետազոտություններն ուղղված են էկոլոգիական անվտանգության ապահովմանը: Արդյունք կհանդիսանա քաղաքային տարածքների կանաչապատման համակարգերում մշտադալար բույսերի կիրառման մեթոդաբանություն, ինչը թույլ կտա բարելավել գոյություն ունեցող կանաչ տնկարկների վիճակը և արդյունավետությունը:

Կենսաէներգիայի և կերային ռեսուրսների բաժին. Հիմք ընդունելով հողերում N,P,K-ի պարունակությունը, կմշակվի խոտհարքներից ստացվող կերերի էներգետիկ-սննդային արժեքի բարձրացման գործնական առաջարկ: Փաստացի կիրառական արդյունք է հանդիսանում տվյալների բազան, որը կօգտագործվի կերային ռացիոնների մշակման ծրագրերում: Արդյունքի կիրառման ոլորտը անասնապահությունն է և այն առնչվում է բնակչության պարենային

անվտանգության հիմնախնդրի հետ: Տվյալ էտապում անհնար է տալ շահութաբերության գնահատական, որը կիրականացվի արդյունքների ներդրումից հետո:

Կազմակերպության
տնօրեն


(ստորագրություն)

(Արմեն Սահաքեյան)
(անուն ազգանուն)

Ծրագրի գիտական ղեկավար՝


(ստորագրություն)

(Արմեն Սահաքեյան)
(անուն ազգանուն)



ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ՊԼԱՆ*

«Շրջակա միջավայրի երկրաբնապահպանական հետազոտություններ» ծրագրի
 (ծրագրի անվանումը)

Իրականացվելիք միջոցառման						
h/h	անվանումը	համառոտ բովանդակությունը	կատարման ենթակա գործառույթների նկարագիրը	ակնկալվող արդյունքները	կատարման ժամկետները	պահանջվող գումարը (հազար դրամ)
1	Շրջակա միջավայրի երկրաքիմիական հետազոտություններ ՀՀ տարբեր շրջաններում:	1. ՀՀ տարածքի հողերում տոքսիկ տարրերի պարունակությունների ուսումնասիրում, տարածական բաշխվածության առանձնահատկությունների բացահայտում, աղտոտման գնահատում և քարտեզագրում:	Տվյալների ամփոփված բազա՝ ներառյալ վնասակար տարրերի պարունակությունների և աղտոտման մակիարդակների բաշխվածության քարտեզներ:	Տվյալների բազա, Քարտեզ, գրաֆիկ, վիճակագրություն, Հոդվածներ Հաշվետվություն	31.03.2019	28731.7
		2. Հրազդան գետի ջրերի նմուշառում և տարրալուծման աշխատանքներ	Մոնիթորինգ		30.06.2019	
		3. Կապան և Քաջարան քաղաքների հողերում տոքսիկ տարրերի ֆոնային պարունակությունների ուսումնասիրում	Ֆոնային երկրաքիմիական հանույթի իրականացում, մոնիթորինգ		30.09.2019	
		4. Հրազդան գետի ջրերի նմուշառում և տարրալուծման աշխատանքներ	Մոնիթորինգ			
		5. Արդյունքների ամփոփում, Հոդվածների մշակում Հաշվետվությունների կազմում:	Հոդվածների և հաշվետվության առկայություն		31.12.2019	
2	Երևան քաղաքի կանաչ տնկարկներում ընգրկված մշտադալար բույսերի էկոլոգակենսա-քիմիական առանձնահատկությունների հետազոտում:	Նախկին տարվա տվյալների ամփոփում: Դաշտային աշխատանքների նախապատրաստում և իրականացում՝ բույսերի վիճակի գնահատում և նմուշառում:	Համալրված տվյալների բազա, տպագրության համար ձևակերպված գիտական հոդված: Հավաքված բուսական նմուշներ և բույսերի վիճակի նկարագրություն:	Տպագրության հանձնված գիտական հոդված: Հետազոտված տեղամասերի մշտադալար բույսերի տեսականի և բուսական նմուշների հավաքածու:	31.03.2019	9000,0
		Լաբորատոր աշխատանքներ՝ նմուշների նախնական մշակում և քիմիական տարրալուծում:	Հավաքված նմուշներում աղտոտիչների և կենսաձին տարրերի պարունակությունների տվյալներ: Բույսերի վիճակի գնահատման վերաբերյալ տվյալներ:	Նմուշների քիմիական անալիզի և բույսերի վիճակի գնահատման վերաբերյալ հավաքագրված տվյալներ:	30.06.2019	
		Դաշտային և լաբորատոր	Նմուշների	Քիմիական անալիզի	30.09.2019	

* Իրականացվելիք միջոցառումները ներկայացնել էռասմայակային փուլերով

		աշխատանքներ:	քիմիական անալիզի տվյալներ:	հավաքագրված տվյալներ:		
		Ստացված տվյալների մուտքագրում և թվայնացում: Տվյալների բազայի ստեղծում: Տվյալների վերլուծում և հաշվետվության կազմում:	Հաշվետվության և գիտական հոդվածի համար՝ մշակված և վերլուծված տվյալներ՝ աղյուսակներ, դիագրամներ և այլն:	Հետազոտության արդյունքում ստացված տվյալների ամբողջական բազա: Հաշվետվություն:	31.12.2019	
3	Միջլաբորատոր փորձարկման ծրագիր. գամմա սպեկտրաչափություն	Ծրագրի կազմում, վիճակագրական վերլուծական թեստերի ընտրություն, ընթացակարգերի կազմում, ստանդարտ ռեֆերենտ նյութի ձեռքբերում	Ծրագիր, ընթացակարգեր, վիճակագրական թեստեր	Աշխատանքների իրականացման պլան	31.03.2019	14000, 0
		Ծրագրի իրականացում, ընթացակարգերի և թեստերի կատարելագործում	Ներդրված ծրագիր	Միջլաբորատոր փորձարկման ծրագիր գամմա սպեկտրաչափական համակարգերի համար	31.12.2019	
	ՀՀ քաղաքների շրջակա միջավայրում բնական ու տեխնածին ռադիոնուկլիդներով պայմանավորված առողջական ռիսկի գնահատում	Առկա տեղեկատվության ու էլեկտրոնային հենքերի ամբողջացում, համակարգում	Տվյալների հենք	Տվյալների էլեկտրոնային հենք	30.06.2019	
		Բնակչության կլանված դոզաների և առողջական ռիսկի գնահատում, թվայնացում	Քարտեզներ	Միջանկյալ հաշվետվություն	30.09.2019	
		Արդյունքների ամփոփում	Գիտական հոդվածների պատրաստում, հրատարակում	Հոդվածների բնագրեր, հրատարակված հոդվածներ	31.12.2019	
	Հրագրան գետի ջրի և հատակային նստվածքների ռադիաէկոլոգիական հետազոտություններ	Նախապատրաստական, դաշտային և տարրալուծման աշխատանքներ	Նմուշներ, տարրալուծման արդյունքներ	Դաշտային գրանցամատյաններ, տարրալուծման արձանագրություններ	31.03.2019	
		Արդյունքների ամփոփում	Գիտական հոդվածների պատրաստում, հրատարակում	Գիտական հոդվածների բնագրեր, հրատարակված հոդվածներ	31.12.2019	
4	Բնական խոտհարքների էներգետիկ-աննոյային արժեքի գնահատում	Նախատեսվում է իրականացնել դաշտային և լաբորատոր աշխատանքներ նվիրված՝ բնական խոտհարքներից ստացվող կերերի որակական ցուցանիշների ուսումնասիրմանը: Բնական խոտհարքների տարբեր մոդելային տարածքներից կհավաքագրվեն բուսական և հողային բույսերի քիմիական տարրալուծման նպատակով: Նախատեսվում է որոշել	Հավաքագրել թեմայի հետ առնչվող գիտական հրապարակումներ և այլ տեղեկատվություն: Դաշտային և լաբորատոր հետազոտությունների իրականացման համար անհրաժեշտ պարագաների և նյութերի ձեռքբերում:	Գիտատեղեկատվական բազա՝ բնական խոտհարքներից ստացվող կերերի և հողերի արմատաբնակ շերտի քիմիական կազմի վերաբերյալ:	31.03.2019	18000,0
		Նմուշներ քիմիական տարրալուծման նպատակով: Նախատեսվում է որոշել	Բնական խոտհարքներում կատարել մոդելային տարածքների ընտրություն՝ հիմք ընդունելով	Խոտհարքների մոդելային տարածքների առկայություն և դրանց	30.06.2019	

		<p>հետևյալ չափորոշիչները. կերաբույսերում՝ ընդհանուր էներգիայի և օրգանական նյութերի, հում պրոտեինի, ճարպի և թաղանթանյութի, իսկ հողերում՝ N, P և K-ի պարունակությունը: Ստացված տվյալների վերլուծությունը թույլ կտա բացահայտել կերային արժեքի և հանքային տարրերի միջև առկա կապը:</p>	<p>դրանց արդյունավետության մակարդակը, դիրքադրությունը և լանջերի թեքության աստիճանը: Իրականացնել բուսազանգվածի և հողերի նմուշարկում:</p>	<p>արդյունավետության վերաբերյալ տվյալներ: Չոր խոտի և հողային նմուշների հավաքածու տարրալուծման նպատակով:</p>		
			<p>Հավաքագրված բուսական և հողային նմուշների նախապատրաստում և տարրալուծում:</p>	<p>Մոդելային տարածքների արդյունավետության, կերերի որակական ցուցանիշների և հողերում N, P, K-ի պարունակության վերաբերյալ համակարգչային բազա:</p>	30.09.2019	
			<p>Կատարել ստացված փորձնական նյութի ամփոփում՝ պարզելու համար մոդելային տարածքների հանքային տարրերով ապահովածության մակարդակի և կերաբույսերի որակական ցուցանիշների միջև առկա կապի բնույթը: Ամփոփիչ հաշվետվության կազմում, նյութերի նախապատրաստում հողվածների համար:</p>	<p>Ամփոփիչ հաշվետվություն: Փորձարարական նյութեր՝ հողվածների հրատարակման համար:</p>	31.12.2019	
5	<p>Սննդամթերքի անվտանգության ապահովման գիտամեթոդական բնույթի աշխատանքներ:</p>	<p>Անհրաժեշտ գրականության, նորմատիվների և օրենսդրական ակտերի հավաքագրում:</p>	<p>Ընդհանուր սննդակարգային հետազոտության ներդաշնակեցված մեթոդների վերաբերյալ մեթոդական ուղեցույցի մշակում:</p>	<p>Ընդհանուր սննդակարգային հետազոտության մեթոդական ուղեցույց:</p>	31.03.2019 30.06.2019	19000,0
	<p>Սննդամթերքի անվտանգությանը սպառնացող քիմիական վտանգների և ռիսկերի գնահատում:</p>	<p>Շարունակվելու են պարենամթերքի շուկայում լայն սպառում ունեցող մթերքներում քիմիական վտանգների և դրանցով պայմանավորված ռիսկերի գնահատմանն ուղղված աշխատանքները:</p>	<p>Շուկաներում շրջայցերի իրականացում, մթերքների նմուշառում, ռիսկի գնահատում, ստացված տվյալների վերլուծություն և ամփոփում:</p>	<p>Արդյունքների գիտական հիմնավորում:</p>	30.09.2019	

	Մանդակարգային ուսումնասիրություններ:	Շարունակվելու են ազգաբնակչության շրջանում մթերքների սպառման վերաբերյալ սոցիոլոգիական հարցումների իրականացում, տվյալների մուտքագրում և վերլուծություն:	SPSS ծրագրում ներմուծված՝ սննդամթերքի սպառման տվյալների բազայի ստեղծում:	Ներգդեցության (Էքսպոզիցիայի) գնահատման նպատակով կիրառելի տվյալների բազա:	31.12.2019	
6	Յունեսկո-ի «կրթություն հանուն կայուն զարգացման» ամբիոն	“Բնապահպանություն և բնօգտագործում”, մասնագիտության շրջանակներում մագիստրոսական կրթության աջակցություն, թրեյնինգների իրականացում	Շրջակա միջավայրի պահպանության վերաբերյալ գիտական հետազոտությունների, կրթության և նորարարության ինտեգրում, սեմինար վարժանքների կազմակերպում	Դասընթացներ, տեղեկատվական փաթեթներ, վերապատրաստված թիրախային խմբեր, ՅՈՒՆԵՍԿՕ-ի “ԿԿԶ” ամբիոնի կողմից տրված վկայականներ	31.05.2019	5000,0
		UNESCO-ի բազային դպրոցներում "Շրջակա միջավայրի ադտոտվածության վերաբերյալ" կիսամյակային դասընթաց-սեմինարների անցկացում	Համատեղ բնապահպանական գիտա-կրթական ծրագրերի և միջոցառումների իրականացում	Սկայպ հանդիպումներ, կիսամյակային դասընթաց-սեմինարներ, գիտական փորձեր, ռեֆերատներ, պրեզենտացիաներ, իրազեկված սովորողներ	31.12.2019	
		Կրթություն հանուն կայուն զարգացման ոլորտներում գիտական հետազոտությունների իրականացում	“Ավագ դպրոցի սովորողների քաղաքացիական կոմպետենտության ձևավորման մոդել” գիտական թեմայի շրջանակներում Հայաստանի և Ռուսաստանի մշակութային ավանդույթների ուսումնասիրություն և համեմատական վերլուծություն	Ազգային մշակույթի ավանդույթների միջոցով սովորողների քաղաքացիական կոմպետենտության ձևավորման մոդելի փորձարկում, հողվածներ	31.12.2019	
		Բնապահպանական գիտակրթական ծրագրերի բազաների պարբերաբար լրամշակում	Բնապահպանական կրթության ցանցի (ԲԿՑ) աշխատանքներին ներգրավում, տեղեկատվության փոխանակում UNITWIN Networks, Copernicus Alliance, ENSI, Info CENN, GUPES և այլ ցանցերում:	Համատեղ ծրագրեր, հանդիպումներ, հողվածներ	31.12.2019	
		Կիպրոսի հանրակրթության ոլորտի հետ համագործակցության հաստատում և համատեղ ծրագրերի իրականացում	“Բաց կայուն” դպրոցների հետ համատեղ ծրագրի մշակում և իրականացում, փորձի փոխանակում	Համատեղ ծրագրեր, հանդիպումներ, փոխայցելություններ, հողվածներ	31.12.2019	
7	Լանդշաֆտային պլանավորման և լանդշաֆտային կայունության գնահատման գիտամեթոդական հիմունքների	Կլիմայի փոփոխության պայմաններում լեռնային էկոհամակարգերի արդյունավետության գնահատման հեռզանման մեթոդների մշակման աշխատանքների շարունակ-	Հեռզանման տվյալների կիրառմամբ լեռնային էկոհամակարգերի արդյունավետության գնահատման ստուգաչափված	Թեմատիկ քարտեզներ, տեղեկատվական բազաներ, գիտական հողվածներ:	30.06.2019	20000,0

մշակում և և էկոլոգիական մոնիթորինգի հեռազննման համակարգի ստեղծում :	կում Գյուղատնտեսական հողահանդակներում էրոզիոն պրոցեսների ձևավորման, զարգաց- ման և վտանգավորութ- յան աստիճանի գնա- հատման հեռազննման մեթոդիկայի մշակման աշխատանքների շարունակում	մեթոդիկա: Արբանյակային և աէրոլուսանկարներից լեռնային գյուղատն- տեսական հողահան- դակների էրոզիայի գնահատման ստու- գաչափված սպեկտ- րալ հայտանիշներ:	Թեմատիկ քարտեզներ, տեղեկատվական բազաներ, գիտական հոդվածներ:	31.12.2019	
Ընդամենը					113731.7

Կազմակերպության
տնօրեն (ռեկտոր)՝


(ստորագրություն)

(Արմեն Սարգսյան)
(անուն ազգանուն)

Ծրագրի գիտական ղեկավար՝


(ստորագրություն)

(Արմեն Սարգսյան)
(անուն ազգանուն)



Հավելված 4
 « 30 » 01 2019 թ.
 N 15-18 պայմանագրի

ՆԱԽԱՀԱՇԻՎ
 «Շրջակա միջավայրի երկրաբնապահպանական հետազոտություններ» ծրագրի
 (ծրագրի անվանումը)

հազար դրամ

Հ/հ	Հոդվածի անվանումը	Ֆինանսավորման ծավալը	այդ թվում՝			
			1-ին եռամսյակ (20%)	2-րդ եռամսյակ (25%)	3-րդ եռամսյակ (25%)	4-րդ եռամսյակ (30%)
1	աշխատավարձ՝ ներառյալ եկամտային հարկը	76718.26	15343.66	19179.56	19179.56	23015.48
2	տնտեսական և այլ ծախսեր*	18058.16	3611.64	4514.54	4514.54	5417.44
Ընդամենը (առանց ԱԱՀ)		94776.42	18955.28	23694.11	23694.11	28432.92
ԱԱՀ		18955.28	3791.05	4738.82	4738.82	5686.59
ԸՆԴԱՄԵՆԸ		113731.7	22746.33	28432.93	28432.93	34119.51

Կազմակերպության տնօրեն


 (ստորագրություն)

(Ս. Սահակյան)
 (անուն ազգանուն)

Կազմակերպության գլխավոր հաշվապահ՝


 (ստորագրություն)

(Տ. Իսահակյան)
 (անուն ազգանուն)




* Բուհերում իրականացվող ծրագրերի համար նախատեսել ծրագրի ֆինանսավորման առնվազն 3%-ը, մյուս գիտական կազմակերպություններում իրականացվող ծրագրերի համար՝ առնվազն 5%-ը

Հավելված 4.1
 « 30 » 01 2019թ.
 N Կ-18 պայմանագրի

ՆԱԽԱՀԱՇՎԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՎ ԱՅԼ ԾԱԽՍԵՐ †

Հ/հ	Ծախսերի անվանումը	Ֆինանսավորման ծավալը, առանց ԱԱՀ (հազար դրամ)
1	Կոմունալ ծառայություններ, այդ թվում՝	
	էլեկտրաէներգիայի ծառայություն	3880.0
	զազի ծառայություն	-
	ջրամատակարարման ծառայություն	70.0
	կապի ծառայություն	3530.0
	աղբահանություն	60.0
2	Գույք	1200.0
3	Սարքեր և սարքավորումներ	1250.0
4	Նյութեր	2968.16
5	Գործուղումներ	3600.0
6	Գիտական միջոցառումների կազմակերպում	-
7	Արշավախմբեր	-
8	Հրատարակման ծախսեր	-
9	Այլ	1500.0
Ընդամենը		18058.16

Կազմակերպության տնօրեն՝  (Ա. Սահաքեյան)
 (ստորագրություն) (անուն ազգանուն)

Կազմակերպության գլխավոր հաշվապահ՝  (Տ. Բանակյան)
 (ստորագրություն) (անուն ազգանուն)




* Բուհերում իրականացվող ծրագրերի համար չի լրացվում

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐՈՂՆԵՐԻ ՄԱՍԻՆ
«Շրջակա միջավայրի երկրաբնապահպանական հետազոտություններ» ծրագրի

Հ/հ	Ազգանուն, անուն, հայրանուն	Պաշտոն	Գիտական աստիճան	Աշխատավարձ՝ ներառյալ եկամտային և հարկը (հազար դրամ)
1	Սաղաթեյան Արմեն Կառլենի	տնօրեն	երկր.հանք.գիտ.դոկ.	185.0
2	Սահակյան Լիլիթ Վարուժանի	գիտ.գծով փոխտնօրեն	աշխ.գիտ.թեկն.	177.0
3		գլխավոր գիտաշխատող		175.0
4	Մուրադյան Ամալյա Համբարձումի	գիտ.քարտուղար	կենս.գիտ.թեկն.	145.0
5	Գևորգյան Դիանա Անաուշավանի	ընդհ.բաժնի վարիչ	-	129.0
6	Իսահակյան Տարուշ Վարդանի	գլխ.հաշվապահ	-	129.0
7	Միրզոյան Գայանե Երվանդի	հաշվապահ-գանձապահ	-	99.0
8	Մկրտչյան Մարինա Յուրիի	կադրերի ավագ տեսուչ	-	129.0
9		գնումների համակարգող	-	85.0
10	Բեյլերյան Անահիտ Նորայրի	ռեֆերենտ թարգմանիչ	-	99.0
11	Գալոյան Մարիաննա Սարգսի	համ. օպերատոր /երեխայի խնամքի արձակուրդ/	-	-
12	Դանելյան Ռիտա Ռուբենի	համ. օպերատոր		99.0
13	Պիպոյան Դավիթ Աշոտի	կենտրոնի ղեկավար	սննդագիտ.դոկ. (Իտալիա)	140.0
14	Մեծունց Բագրատ Խաչատուրի	բաժնի ղեկավար	ցուղ.գիտ.դոկ.	118.0
15	Հովհաննիսյան Հասմիկ Ալբերտի	բաժնի ղեկավար	կենս.գիտ.թեկն.	118.0
16	Տեփանոսյան Գևորգ Հովհաննեսի	բաժնի ղեկավար	կենս.գիտ.թեկն.	118.0
17	Ասմարյան Շառանիկ Գուրգենի	բաժնի ղեկավար	աշխ.գիտ.թեկն.	118.0
18	Բեյլանա Օլգա Ալեքսանդրի	բաժնի ղեկավար	կենս.գիտ.թեկն.	118.0
19	Հարությունյան Դավիթ Մհերի	լաբորատորիայի ղեկավար	քիմ.գիտ.թեկն.	118.0
20	Պողոսյան Գայանե Սուրենի	ամբիոնի վարիչ	կենս.գիտ.թեկն.	110.0
21	Բեգլարյան Մելինե Ռադիկի	խմբի ղեկավար	տեխ.գիտ.թեկն.	110.0
22	Բաբայան Գայանե Հրանտի	ավագ գիտ.աշխատող	տեխ.գիտ.դոկ.	107.0
23	Ավետիսյան Մարիետա Համլետի	ավագ գիտ.աշխատող	աշխ.գիտ.թեկն.	102.0
24	Նավասարդյան Մարինե Արագու	ավագ գիտ.աշխատող	կենս.գիտ.թեկն.	102.0
25	Ներսիսյան Գայանե Սամվելի	ավագ գիտ.աշխատող	կենս.գիտ.թեկն.	102.0
26	Մուրադյան Վահագն Մոսի	ավագ գիտ.աշխատող	աշխ.գիտ.թեկն.	102.0
27	Փյունսկյույան Կոնստանտին Իվանի	ավագ գիտ.աշխատող /համ/	ֆիզ.-մաթ.գիտ.թեկն.	100.0
28	Սաղաթյան Նահրուհի Ռաֆիկի	գիտ.աշխատող	կենս.գիտ.թեկն.	100.0
29	Տեփանոսյան Գարեգին Հովհաննեսի	կրտսեր գիտ.աշխատող	կենս.գիտ.թեկն.	86.0
30	Կաֆյան Մխիթար Հովիկի	կրտսեր.գիտ.աշխատող	կենս.գիտ.թեկն.	86.0
31	Սարգսյան Տաթևիկ Աշոտի	կրտսեր գիտ.աշխատող	-	86.0
32	Հովսեփյան Ազատուհի Արծրունու	կրտսեր գիտ.աշխատող	-	86.0
33	Խաչատրյան Լիլիթ Ռոբերտի	կրտսեր գիտ.աշխատող	-	86.0
34		կրտսեր գիտ.աշխատող	-	86.0
35	Սաբոյան Աստղիկ Գուրգենի	քիմ.անալիտիկ	կենս.գիտ.թեկն.	86.0
36	Ղազարյան Ջուլյա Էրեզլոյի	քիմ.անալիտիկ	-	86.0
37	Հայրապետյան Էլիզա Հմայակի	քիմ.անալիտիկ	-	86.0
38	Մնացականյան Արմենուհի Արմենի	քիմ.անալիտիկ	-	79.321
39	Միրեյան Լիանա Արայիկի	փորձագետ	-	79.321
40	Հովհաննիսյան Աստղիկ Սերգեյի	փորձագետ	-	78.0
41	Աբրահամյան Արմեն Սարգսի	փորձագետ	-	78.0

42	Մինասյան Լիլիթ Արամի	փորձագետ	-	78.0
43	Պողոսյալ Լիլիթ Վաղարշակի	փորձագետ/4ժամ/	-	52.0
44		փորձագետ		78.0
45		ավագ լաբ.-հետազոտող	-	78.0
46	Անանյան Ռուզաննա Ալեքսեյի	ավ.լաբ.հետազոտող /համ/	-	65.0
47	Սահակյան Գևորգ Աշոտի	լաբորանտ-հետազոտող	-	78.0
48	Մելքոնյան Գայանե Աշոտի	լաբորանտ-հետազոտող	-	79.321
49	Յարմալոյան Քրիստինե Վարդանի	լաբորանտ-հետազոտող	-	79.321
50	Այվազյան Գրիգոր Միերի	լաբորանտ-հետազոտող/4ժամ/		52.0
51	Մովսիսյան Նոնա Էդիկի	լաբորանտ-հետազոտող	-	79.321
52		լաբորանտ-հետազոտող	-	78.0
53	Ստեփանյան Ստելլա Արթուրի	լաբորանտ-հետազոտող	-	78.0
54	Ստեփանյան Սեդա Արթուրի	լաբորանտ-հետազոտող	-	78.0
55	Ղուեջյան Էմմա Արամայիսի	լաբորանտ-հետազոտող/4ժամ/	-	52.0
56	Թաթոյան Սիրարփի Ռուսլանի	մեթոդիստ	-	79.321
57	Գրիգորյան Մերի Մուրադի	մեթոդիստ /երեխայի խնամքի արձակուրդ/	-	-
58	Ամիրյան Ելենա Վարոսի	մեթոդիստ	-	79.321
59	Աֆրիկյան Գրետա Գուրգենի	ավագ լաբորանտ	-	74.075
60	Շախնազարովա Յանա Գերասիմի	լաբորանտ	-	79.321
61		գրադարանավար /համ/	-	45.0
62		քաղ պաշտպ.շտաբի պետ /համ/	-	40.0
63	Կուզնեցով Անատոլիյ Վիկտորովիչ	տնտեսվար	-	140.0
64	Աղաբաբյան Տիգրան Վոլոդյայի	ինժեներ էլեկտրիկ /համ/	-	73.0
65	Մարդանյան Գայանե Հովհաննեսի	հավաքարար	-	74.075
66	Մարտիրոսյան Ռոզա Հովհաննեսի	հավաքարար	-	79.321
67	Սահակյան Գևորգ Գուրգենի	վարորդ	-	74.075
68	Բաղայան Արթուր Խաչիկի	վարորդ	-	78.0
69	Երանոսյան Արեգնազ Պարույրի	դրնապահ	-	76.0
70	Բաբայան Նաիրա Շահենի	դրնապահ	-	74.075
Ընդամենը				6393.189

Կազմակերպության
տնօրեն՝

 (Ա. Սաղաթեյան)
(ստորագրություն) (անուն ազգանուն)

Կազմակերպության
անձնակազմի կառավարման
բաժնի պետ՝

 (Ս. Մկրտչյան)
(ստորագրություն) (անուն ազգանուն)

